ՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակաշենը Հադրութի շրջանի մեռած գյուղերից էր: Գուցե տվյալ պարագայում «մեռած» բառը շատ է տհաճ, բայց դա այդպես է, որովհետև գյուղը շնչավոր է: Իսկ ինչի՞ է նման պատուհանները բաց, լքված տներով գյուղը: Ամբողջ մխիթարանքն այն է, որ անցյալ ժամանակով սկսեցինք մեր առաջին նախադասությունը: Մեռած գյուղն, այո, սկսել է կենդանության նշաններ ցույց տալ: Գյուղը ուշքի է գալիս, գյուղը հարություն է առնում:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տասը ազգասեր ու նվիրյալ ուսանողներ, առաջին հայացքից, հանդուգն քայլ ձեռնարկեցին՝ երկրորդ կյանք տալ հինավուրց գյուղին: Եկան, տեղավորվեցին գյուղում ու սկսեցին տքնել: Բացեցին բազմապրոֆիլ կոոպերատիվ (անունը՝ «Սպիտակ»), սկսեցին հերկել հողը, խնամել այգիները, տուն կառուցել: Դժվարությունները սպեղի քան շատ են, բայց գործը առաջ է գնում: Կամաց-կամաց, քայլ առ քայլ, բայց առաջ է գնում:

«Ադյամ» հանդեսի խմբագրությունը վերցնում է վերածնվող գյուղի շեֆությունը, բացում այնտեղ թղթակցական կետ: Այսուհետև յուրաքանչյուր համարում խոսելու ենք գյուղում գործերի վիճակի մասին, մեր տղաների հերոսական աշխատանքի, նրանց հոգսերի ու հույզերի մասին: Այս առնչությամբ դիմում ենք կունակցության Հադրութի շրջկոմին, ժողովրդական դեպուտատների Հադրութի շրջանային խորհրդին, մարզի ու շրջանի իրավասու կազմակերպություններին ու կոչ անում չլինել ականատեսի դերում, այլ կարելի սահմաններում օգնել տղաներին: Ի դեպ, շրջկոմը ու շրջանային խորհուրդը խմբագրությանը խոստացել են հատուկ որոշում ընդունել Սպիտակաշենի վերաբերյալ: Ինչու՞մն է բանը, ընկերներ, մենք սպասում ենք ձեր փրկարար որոշմանը:

Հադրութցիները ասում են՝ վերին գյուղերն իրար կապող ճանապարհ գցեք ու կտեսնեք, թե ինչպես ոլորքների պես վերածնվող գյուղեր կշարվեն նրա երկայնքով: Ուրեմն՝ գուցե սկսենք ճանապարհների՞ց: Աչակցելով Սպիտակաշենին, մենք, ի դեմս նրա, աջակցում ենք բոլոր վերականգնվող գյուղերին: Որ չեղանա շրջանը: Որ չեղանա մարզը: Որ արցախցին լինի իր հողի տերը: Որ ոչ մի մարդիկ նրան արմատախիլ չանի իր հողից: